

Կ-8 Քալիֆորնիոյ
Համընդհանուր
Հիմնական Չափանիշներ
Ուղեցոյց
Ծնողներու
Համար

WESTERN ARMENIAN VERSION



Քալիֆորնիոյ Վարչաշրջանի Տեսուչներու

Կրթական Ծառայութիւններու Միութիւն

© 2013 Քալիֆորնիոյ Վարչաշրջանի Տեսուչներու Կրթական Ծառայութիւններու Միութիւն

Ելեւմտական Աջակցութիւնը Տրամադրուած է

«The William and Flora Hewlett» Հիմնադրամի կողմէ

Քալիֆորնիոյ Կրթութեան Նախարարութիւնը (CDE) իր երախտագիտութիւնն ու բարձր գնահատանքը կը յղէ Քալիֆորնիոյ Վարչաշրջանի Տեսուչներու Կրթական Ծառայութիւններու Միութեան (CCSESA) եւ Սաքրամենթոյի Վարչաշրջանի Կրթութեան Գրասենեակին (SCOE), որոնք բարի գտնուեցան թոյլատուութիւն տալով թարգմանել այս փաստաթուղթը:

Սոյն թարգմանութիւնը դպրոցներուն կը հայրայթոյի որպէս թեքնիքական օգնութեան մեթոտ, որպէսզի ուսուցիչները ծնողական համաժողովներու եւ ծնողական յառաջընթացի ծրագիրներու ատեն կարենան գործածել այս ուղեցոյցը: Քանի որ թարգմանութիւններու ժամանակ տարբերութիւններ կրնան ըլլալ, CDE-ը դպրոցներուն կ'առաջարկէ աշխատիլ տեղական թարգմանիչներու հետ՝ փոփոխելու փաստաթուղթը, եթէ անոնց անհրաժեշտութիւնը կայ՝ համապատասխանեցնելու տեղական կարիքներուն: Թարգմանութեան վերաբերող հարցումները պէտք է ուղղել «Clearinghouse for Multilingual Documents»-ին՝ cmd@cde.ca.gov հասցեով:

Պատրաստուած է՝

Sacramento
Office of Education **County**

Patricia Duckhorn-ի, Tamara Wilson-ի, Fran Gibson-ի, Kathy Curl-ի, Sue Stickel-ի ,
Քալիֆորնիա Նահանգի Ծնողական եւ Ուսուցչական Միութեան (PTA) եւ Վենտուրայի
Վարչաշրջանի Կրթութեան Գրասենեակի աջակցութեամբ

Բովանդակություն

Նախաբան	4
---------------	---

Ուսողություն

Ուսողություն – Չափանիշներ՝ Գործնական Ուսողութեան Համար	6
Մանկապարտեզ՝ Ակնարկ.....	8
1-ին Դասարան՝ Ակնարկ	10
2-րդ Դասարան՝ Ակնարկ	12
3-րդ Դասարան՝ Ակնարկ	14
4-րդ Դասարան՝ Ակնարկ	16
5-րդ Դասարան՝ Ակնարկ	18
6-րդ Դասարան՝ Ակնարկ	20
7-րդ Դասարան՝ Ակնարկ	22
8-րդ Դասարան՝ Ակնարկ	24

Անգլերէն Լեզու

Մանկապարտեզ՝ Ակնարկ.....	26
1-ին Դասարան՝ Ակնարկ	28
2-րդ Դասարան՝ Ակնարկ	30
3-րդ Դասարան՝ Ակնարկ	32
4-րդ Դասարան՝ Ակնարկ	34
5-րդ Դասարան՝ Ակնարկ	36
6-րդ Դասարան՝ Ակնարկ	38
7-րդ դասարան՝ Ակնարկ.....	39
8-րդ Դասարան՝ Ակնարկ	41

Նախաբան

Այս ուղեցոյցը ծնողներուն կը ներկայացնէ Քալիֆորնիոյ Համընդհանուր Հիմնական Չափանիշները, ինչպէս նաեւ ամփոփում մը, թէ ինչ կականկալեն աշակերտները սորվելու, երբ կը յառաջանան մանկապարտէզէն դէպի 8-րդ դասարան: Չափանիշները ծրագրուած են արտացոլելու այն գիտելիքներն ու հմտութիւնները, որոնց կարիքը ունին մեր երիտասարդները՝ քոլէճի եւ մասնագիտական գործունէութեան մէջ յաջողութեան հասնելու համար: Ուսումնական նպատակներու ընդհանուր շարքը կ'օգնէ ուսուցիչներուն եւ ծնողներուն՝ երաշխաւորելու, որ աշակերտները ջանք կը թափեն եւ համապատասխան յառաջընթաց կ'արձանագրեն:

Ինչո՞ւ Համընդհանուր Հիմնական Չափանիշները

Քալիֆորնիոյ մանկավարժները միացած են ազգային շարժումի մը՝ պաշտօնապէս ընդունելու անգլերէն լեզուի եւ ուսողութեան համընդհանուր չափանիշները եւ գնահատումները: Ներկայ չափանիշները, որոնք կը սահմանեն, թէ ի՞նչ պէտք է գիտնան եւ ի՞նչ կրնան ընել աշակերտները, կը տարբերին նահանգէ նահանգ. նոյնն է նաեւ գնահատումներու դժուարութեան իմաստով, թէ արդեօք աշակերտները կը բաւարարէ՞ն այս չափանիշները: Համընդհանուր չափանիշները հնարաւոր կը դարձնեն նահանգներու միջեւ համագործակցութիւնը՝ լաւագոյն գործադրութեան եւ մասնագիտական զարգացման առումով:

Համընդհանուր ուսուցման նպատակները յստակ տեսութիւն կը տրամադրեն, թէ մանկավարժներն ու ծնողները բոլոր նահանգներու մէջ ի՞նչ նպատակ պէտք է հետապնդեն: Ուսուցման այս նպատակները կ'օգնեն երաշխաւորել, որ աշակերտները կը բաւարարեն քոլէճի եւ աշխատանքի պահանջները, պատրաստ են յաջողութեան հասնիլ համաշխարհային տնտեսութեան պայմաններուն եւ հասարակութեան մէջ, եւ անոնց կը տրամադրուի ճշգրիտ բովանդակութիւն եւ աւելի բարձր գիտելիքներով մտածողութեան գործադրումի հնարաւորութիւն: Միջազգային չափանիշներու դէմ յանդիման, Համընդհանուր Հիմնական Չափանիշները աշակերտներուն կ'օգնեն նախապատրաստուելու ամբողջութեամբ կատարել այն պահանջները, որոնք անհրաժեշտ են Քալիֆորնիոյ պետական համալսարան ընդունուելու համար:

Համընդհանուր Հիմնական Չափանիշներու Հաստատումը Քալիֆորնիոյ մէջ

2010-ի Օգոստոսին Քալիֆորնիոյ մէջ հաստատուած K-12 Համընդհանուր Հիմնական Չափանիշները կատարելագործուեցան ամբողջ նահանգով մէկ, ներդրուած ջանքերու շնորհիւ՝ անգլերէն լեզուի եւ ուսողութեան համար կայուն եւ դիրքամրոնելի չափանիշներ ստեղծելու համար: Նահանգի Գլխաւոր Դպրոցներու Պատասխանատուներու Խորհուրդը եւ Նահանգապետերու Ազգային Միութիւնը սկսան եւ աջակցեցան նախաձեռնութեան: Համընդհանուր Հիմնական Չափանիշներու հաստատման գործընթացին մէջ Քալիֆորնիան աւելցուց օժանդակ չափանիշները՝ լրացնելու այն եզակի պատկերը, որ անհրաժեշտ է Քալիֆորնիոյ աշակերտներուն:

Համընդհանուր Հիմնականը նաեւ յաւելեալ ազդեցութիւն ունեցաւ Քալիֆորնիոյ արդէն գոյութիւն ունեցող չափանիշներու վրայ՝ ներառնելով բառամթերքի համար նախատեսուած չափանիշները, ինչպէս նաեւ նոր չափանիշներ համագործակցային քննարկումներու համար: Նոյնպէս ներառնուած են գրաճանաչութեան չափանիշները, որոնք պատմութեան/ ընկերային ուսումնասիրութիւններու, գիտութեան եւ արուեստի ուսուցման ժամանակ կը կեդրոնանան կարդալու եւ գրելու ուսուցման վրայ: Ուսողութեան պարագային, չափանիշները աւելցուեցան՝ աւելի ընդգծուած շեշտադրում ցուցադրելու թիւերու եւ հանրահաշուական մտածողութեան առումով: Համընդհանուր Հիմնական Չափանիշներու կիրարկութիւնը Քալիֆորնիոյ դպրոցներուն մէջ տեղի կ'ունենայ փուլերով՝ յաջորդող հինգ տարիներուն ընթացքին:

Չափանիշներու Կազմումը

Այս ուղեցոյցը համակարգուած կերպով տեղեկութիւններ կը կազմէ անգլերէն լեզուի եւ ուսողութեան վերաբերող չափանիշներու իւրաքանչիւր դասարանի մակարդակի կամ դասանիւթի ընթացքին՝ սկսած մանկապարտէզէն մինչեւ 8-րդ դասարան: Իւրաքանչիւր դասարանի մակարդակին համար բովանդակութեան ակնարկ մը եւ այդ մակարդակի մէջ ձեռք բերած հմտութիւններու ամփոփում մը կը պարունակէ: Աւելի ուշ, յաւելեալ տեղեկութիւններ պիտի տրամադրուին 9-12 դասարաններու համար:

Անգլերէն լեզուի պարագային, Քալիֆորնիոյ Համընդհանուր Հիմնական Չափանիշները կը կազմակերպուին հետեւեալ չորս խումբերուն մէջ՝ (1) ընթերցանութիւն (2) գրել (3) խօսիլ ու լսել եւ (4) լեզու:

Ուսողութեան բովանդակութեան չափանիշներու ընդհանուր նկարագրումէն զատ՝ դասարանի մակարդակով կամ ըստ դասընթացքի, այս ուղեցոյցը կը պարունակէ նաեւ շարք մը յատկութիւններ եւ վարժութիւններ, որոնք իւրաքանչիւր աշակերտ պէտք է զարգացնէ, եւ որոնք կը կոչուին Ուսողական Վարժութեան Չափանիշներ: Այս վարժութիւնները կը խորացնեն ուսողութեան ըմբռնումը եւ կը բարձրացնեն աշակերտներու խնդիրները լուծելու կարողութիւնը: Այս վարժութիւններուն մասին տեղեկութիւնները կը գտնուին յաջորդ էջին վրայ:

Ուսողություն - Ուսողական Վարժության Չափանիշներ

Ուսողական Վարժության Չափանիշները կը նկարագրեն այն յատկությունները, որոնք բոլոր աշակերտները կը զարգացնեն Համընդհանուր Հիմնական Չափանիշներու մէջ: Այս վարժությունները հիմնուած են կարելու «գործընթացներու եւ հմտութիւններու» վրայ, ներառեալ խնդիրներու լուծում, դատողութիւն եւ ապացոյց, հաղորդակցութիւն, ներկայացուցչութիւն եւ կապերու հաստատում: Այս վարժությունները հնարաւորութիւն կու տան աշակերտներուն հասկնալ եւ վստահութեամբ կիրառել ուսողութիւնը:

- Խնդիրները հասկնալ եւ զանոնք լուծելու ատեն հաստատականութիւն ցուցաբերել:
 - Խնդիրներուն մէջ իմաստ գտնել
 - Վերլուծել, կանխագուշակել եւ լուծումի ուղիներ ծրագրել
 - Պատասխանները ստուգել
 - Իրենք իրենց տան այս հարցումը՝ «Արդեօք ասիկա իմաստ ունի՞»:
- Վերացականօրէն եւ քանակական կերպով ամփոփել:
 - Ըմբռնել քանակութիւնները եւ անոնց կապը խնդիրներու հետ
 - Ստեղծել խնդիրներու հետ առնչուած պատկերներ
- Կառուցել իրագործելի փաստեր եւ քննադատել ուրիշներու դատողութիւնը:
 - Հասկնալ եւ գործածել տեղեկութիւնը՝ փաստեր կառուցելու համար
 - Կազմել եւ փնտռել ենթադրութիւններու ճշդութիւնը
 - Արդարացնել եզրակացութիւնները եւ պատասխանել այլ փաստերուն
- Նմոյշ ուսողութեան հետ:
 - Ուսողութիւնը կիրառել ամէնօրեայ կեանքի խնդիրներուն մէջ
 - Գործնական իրավիճակներու մէջ քանակութիւնները որոշել
 - Իրավիճակի բնագրին մէջ արդիւնքները մեկնաբանել եւ մտածել այն մասին, թէ արդեօք արդիւնքները իմաստ ունի՞ն:
- Համապատասխան գործիքները ռազմագիտականօրէն գործածել:
 - Խնդիրներ լուծելու ատեն հաշուի առնել մատչելի գործիքները
 - Ծանօթ ըլլալ այն գործիքներուն, որոնք կը համապատասխանեն իրենց դասարանին կամ դասընթացքին (մատիտ եւ թուղթ, փաստացի օրինակներ, քանակ, անկիւնաչափ, հաշուիչ, ելեկտրոնային աղիւսակ, համակարգչային

ծրագիրներ, կայքէջին վրայ տեղադրուած թուայնացուած բովանդակութիւն եւ այլ արուեստագիտական գործիքներ)

- Ճշգրիտ ըլլալ:
 - Ճիշդ ձեւով հաղորդակցուիլ ուրիշներու հետ
 - Գործածել յստակ սահմանումներ, ձեւակերպել նշաններու իմաստը եւ ուշադիր ըլլալ մանրամասներու չափի միաւորները եւ պիտակաւորման համակարգերը
 - Ճշգրիտ եւ արդիւնաւէտ ձեւով հաշուել
- Փնտռել եւ գործածել կառուցուածքը:
 - Հասկնալ նմոյշները եւ կառուցուածքները
 - Կարենալ ակնարկի համար ետ երթալ եւ փոխել մօտեցումը
 - Խրթին բաները տեսնել որպէս մէկ նիւթ կամ որպէս քանի մը նիւթերէ բաղկացած
- Փնտռել եւ գտնել ուղիներ՝ խնդիրներ լուծելու ատեն կարճ ճանապարհներ գտնելու համար:
 - Երբ հաշիւները կը կրկնուին, փնտռել ընդհանուր մեթոտներ, նմոյշներ եւ կարճ ճանապարհներ
 - Ի վիճակի ըլլալ գնահատելու, թէ արդեօք պատասխանը իմաստ ունի՞

Մանկապարտեզ՝ Ակնարկ - Ուսողություն


Մանկապարտեզի աշակերտները կը սորվին հաշուել մինչեւ 100 եւ գրել մինչեւ 20 թիւը:
Ուշադրութիւն կը դարձուի 11-20 թիւերուն, ուր շեշտը կը դրուի տասնաւորներու եւ
միավորներու վրայ՝ տեղի արժէքի հասկացութեան հիմքը կառուցելու համար: Սկզբնական
գումարումը եւ հանումը կը սկսի մանկապարտեզի մէջ: Աշակերտները կը տեսակաւորեն եւ
կը դասակարգեն առարկաներու խումբերը եւ կը ճանչնան հիմնական ձեւերը:

- Գիտեն թիւերուն անունները եւ կրնան հաշուել մինչեւ 100
- Կը գրեն 0-20 թիւերը
- Կը սորվին 11-էն 20 թիւերու մասին՝ տասնաւորներով եւ միավորներով
- Կը հաշուեն առարկաները՝ ըսելու խումբին մէջ եղող մինչեւ 20 առարկաներու թիւը
- Կը համեմատեն թիւերն ու խումբերը




Ո՞ր խումբը աւելի շատ ունի: Ո՞ր խումբը աւելի քիչ ունի:
Այս խումբերը հաւասար են:


- Կը հասկնան, որ գումարումը խումբերը միասին դնել ու զանոնք աւելցնել է
- Կը հասկնան, որ հանումը խումբերէն անջատել եւ առնել է
- Սահուն կերպով կը գումարեն եւ կը հանեն մինչեւ 5
- Առարկաները կը դասաւորեն ըստ խումբերու




- Կը ստուգեն եւ կը նկարագրեն ձեւերը



(a)



(b)



(c)



(d)

Քանի՞ կողմ եւ «անկիւն» ունին այս
պատկերները:

Ո՞ր պատկերը հաւասար
երկարութեամբ կողմեր ունի:

1-ին Դասարան՝ Ակնարկ - Ուսողություն

Առաջին դասարանի աշակերտները կընդարձակեն գումարումի եւ հանումի իրենց գիտելիքները՝ սորվելով գումարումն ու հանումը, լուծելով բառային խնդիրները մինչեւ 20 թիւը: Անոնք կը հասկնան հաւասարութեան նշանի իմաստը, եւ անոնցմէ կ'ակնկալուի հաշուել մինչեւ 120: Տեղի արժէքի մասին գիտելիքները կը խորացուն, իսկ աշակերտները կ'օգտագործեն այս գիտելիքները՝ համեմատելու երկաթի թիւերը մինչեւ 100: Աշակերտները կը վարժուին՝ կրկնելով չափումի հմտութիւնները գծային չափումներու հետ եւ քննելէ ետք կը սկսին տուեալներ դուրս բերել: Աշակերտները նաեւ կըսեն եւ կը գրեն ժամանակը՝ ժամեր եւ կէս ժամեր, գործածելով սլաքային եւ թուային ժամացոյցներ:

- Լուծել գումարումի եւ հանումի բառային խնդիրները՝ մինչեւ 20 թիւը
- Հասկնալ կապը գումարումի եւ հանումի միջեւ
- Կիրարկել գործողութիւններու յատկութիւնները

- Գումարումի փոխանակական յատկութիւն.

Եթէ գիտէք $8 + 3 = 11$, այդ պարագային դուք գիտէք, որ $3 + 8 = 11$


(գումարելիներու տեղափոխութենէն գումարը չի փոխուիր):

- Գումարումի գուգորդական յատկութիւն.

Գումարելու $2 + 6 + 4$ -ի պարագային երկրորդ եւ երրորդ թիւերը կրնան գումարուիլ՝ տաս ստանալու համար, այսպէս՝ $2 + 6 + 4 = 2 + 10 = 12$:

- Գումարել եւ հանել մինչեւ 20 թիւը
- Հաշուել մինչեւ 120՝ որեւէ թիւէ սկսելով
- Հասկնալ հաւասարութեան նշանի իմաստը
- Հասկնալ տեղի արժէքը՝ միաւորներու, տասնաւորներու
- Գործածել տեղի արժէքը՝ գումարելու եւ հանելու մինչեւ 100
- Չափել երկարութիւնները եւ ըսել չափուած քանակութեան միաւորները
- Ըսել եւ գրել ժամանակը

- Կառուցել եւ խօսիլ ցուցագիծի շուրջ



Ո՞րն է հովանոցի ամենասիրուած գոյնը:

Ո՞րն է հովանոցի ամենաչսիրուած գոյնը:


- Համեմատել կաղապարները՝ խօսելով անոնց կողմերու, բարձրութիւններու եւ այլնի մասին
- Համեմատել երկակի տարածական կաղապարները եռակի տարածական կաղապարներու հետ (երկարութիւն, լայնութիւն, բարձրութիւն):

2-րդ Դասարան՝ Ակնարկ - Ուսողություն

Երկրորդ դասարանի աշակերտները կը գործածեն գումարումը եւ հանումը մինչեւ 100՝ լուծելու բառային խնդիրներ, իսկ անոնցմէ կ'ակնկալուի, որ մինչեւ երկրորդ դասարանի վերջաւորութեան յիշելով գիտնան երկու միաթիւ թիւերու բոլոր գումարումները/հանումները: Տեղի արժէքի հասկացողութիւնը կ'ընդարձակուի մինչեւ 1000 եւ աշակերտները կը համեմատեն եռաթիւ թիւերը՝ հիմնուելով հարիւրաւորներու, տասնաւորներու եւ միաւորներու մասին ունեցած գիտելիքներու վրայ: Երկրորդ դասարանի աշակերտները կը հաշուեն դրամը, կը սորվին մօտաւորապէս հաշուել եւ կը համեմատեն երկարութիւնները՝ գործածելով համապատասխան չափումի գործիքներ: Երկրորդ դասարանի աշակերտները կը կատարելագործեն երկրաչափութեան իրենց գիտելիքները՝ կողմերու եւ անկիւններու թիւին վրայ հիմնուելով կադապարներ նկարել:

- Լուծել գումարումի եւ հանումի բառային խնդիրները՝ մինչեւ 100
- Սահուն կերպով գումարել եւ հանել մինչեւ 20
- Գիտնալ երկու միաթիւ թիւերու բոլոր գումարումները/հանումները
- Հասկնալ տեղի արժէքը՝ միաւորներ, տասնաւորներ եւ հարիւրաւորներ
- Գործածել տեղի արժէքը՝ գումարելու եւ հանելու մինչեւ 1000
- Կատարել պատշաճ մօտաւոր հաշիւներ՝ գործածելով տեղի արժէքի գիտելիքները
- Չափել, մօտաւոր հաշուել եւ համեմատել երկարութիւնները՝ չափանիշ թիւերու մէջ
- Թիւի գիծին վրայ ներկայացնել ամբողջական թիւին երկարութիւնը
- Աշխատիլ ժամանակի եւ դրամի հետ
- Գիտնալ ժամանակային յարաբերութիւնները (վայրկեաններու քանակը մէկ ժամուան մէջ, օրերու քանակը մէկ ամսուան մէջ եւ այլն)
- Բառային խնդիրները լուծել՝ գործածելով տոլարի թղթադրամներու եւ մետաղադրամներու համակցութիւնը:
- Տուեալները գումարել, ցուցադիւծ կազմել եւ պատասխանել ներկայացուած տուեալներուն վերաբերող հարցումներուն



Քանի՞ տարեկան ես դուն:



Ի՞նչ է մեր դասարանի մէջ յաճախակի հանդիպող տարիքը:

Ի՞նչ է մեր դասարանի մէջ նուազագոյն հանդիպող տարիքը:

- Ճանչնալ կաղապարները, եռանկյինները, քառանկյինները, հնգանկյինները, վեցանկյինները եւ խորանարդները:
- Գծել կաղապարները՝ անկյիններու չափով կամ հաւասար կողմերով՝ թիւով, անկյիններով:



3-րդ Դասարան՝ Ակնարկ - Ուսողություն

Երրորդ դասարանի աշակերտները կը զարգացնեն բազմապատկումի եւ բաժանումի գիտելիքները եւ կը սորվին սահուն կերպով բազմապատկել եւ բաժանում կատարել մինչեւ 100 թիւը: Աշակերտներէն կ'ակնկալուի մինչեւ երրորդ դասարանի վերջաւորութեան յիշելով գիտնալ երկու միաթիւ թիւերու բոլոր արդիւնքները: Տեղի արժեքի գիտելիքները կը գործածեն բազմաթիւ թիւերու հաշիւներու եւ մօտաւոր ենթադրութիւններու համար: Երրորդ դասարանի մէջ կը ծանօթանան կոտորակներու հետ՝ շեշտը դնելով կոտորակներու թիւերու հասկացութեան վրայ, ինչպէս նաեւ անոնց յարաբերական չափը եւ տեղաւորումը թիւերու գիծին վրայ: Երրորդ դասարանի մէջ աշակերտները կը հասկնան մակերես եւ շրջագիծ հասկացութիւնները եւ խնդիրները կը լուծեն՝ գործածելով հեղուկ ծաւալներ եւ զանգուածներ:

- Լուծել բազմապատկումի եւ բաժանումի բառային խնդիրները
- Հասկնալ բազմապատկումի յատկութիւնները
 - Բազմապատկումի փոխանակական յատկութիւն.

Եթէ դուք գիտէք $6 \text{ (անգամ)} \times 4 = 24$, այն ատեն դուք գիտէք $4 \times 6 = 24$:

- Բազմապատկումի զուգորդական յատկութիւն.

$3 \times 5 \times 2$ կարելի է գտնել $3 \times 5 = 15$, յետոյ՝ $15 \times 2 = 30$,

կամ՝ $5 \times 2 = 10$, յետոյ՝ $3 \times 10 = 30$.

- Բազմապատկումի բաշխական յատկութիւն.

Եթէ $8 \times 5 = 40$

եւ $8 \times 2 = 16$,

այն ատեն՝ 8×7 հաւասար է


$8 \times (5 + 2)$

$(8 \times 5) + (8 \times 2)$

$40 + 16 = 56$:

- Սահուն կերպով բազմապատկել եւ բաժանում կատարել մինչեւ 100
- Գիտնալ երկու միաթիւ թիւերու բոլոր արդիւնքները


- Լուծել բառային խնդիրները՝ գումարումի, հանումի, բազմապատկումի եւ բաժանումի միջոցով
- Հասկնալ, որ բազմապատկումն ու բաժանումը կապուած են
- Գործածել կլորցուած թիւերու տեղի արժէքը եւ գիտնալ քառաթիւ թիւերու մէջ իւրաքանչիւր միաւորի արժէքը
- Գործածել տեղի արժէքի հասկացութիւնը՝ լուծելու բազմաթիւ թուաբանութիւն
- Հասկնալ կոտորակները որպէս թիւեր
- Ճանչնալ պարզ համարժէք կոտորակները
- Համեմատել երկու կոտորակները միեւնոյն համարիչի կամ յայտարարի
- Ըսել եւ գրել ամենէն մօտ վայրկեանի եղող ժամը
- Գնահատել եւ չափել ժամանակը, ծաւալը եւ ծանրութիւնը
- Հասկնալ մակերեսը եւ շրջագիծը
- Հասկնալ, որ տարբեր կարգերու կադապարները կրնան ըլլալ նաեւ աւելի մեծ կարգերու մէջ



4-րդ Դասարան՝ Ակնարկ - Ուսողություն


Չորրորդ դասարանի աշակերտները կօգտագործեն տեղի արժեքի մասին ունեցած իրենց գիտելիքները՝ ընդհանրացնելու մինչև 1.000.000 եւ սորվիլ կլորցնելու բազմաթուային ամբողջական թիւերը որեւէ տեղ: Անոնք սահուն կերպով կը գումարեն եւ կը հանեն՝ գործածելով չափանիշ հանրահաշիւ, ինչպէս նաեւ կը բազմապատկեն եւ բաժանում կը կատարեն բազմաթուային թիւերը: Չորրորդ դասարանի աշակերտները կընդարձակեն կոտորակներու ըմբռնումը՝ ներառնելով համարժեքութիւնը, յաջորդականութիւնը եւ պարզ տասնորդական նշանագրութիւնը: Աշակերտները կը չափեն անկիւնները ու գիծերով կը դասակարգեն երկրաչափական կադապարները (գուգահեռ, ուղղահայեաց, եւ այլն) եւ անկիւնները (ուղիղ, սուր, բութ, եւ այլն):

- Գործածել գումարում, հանում, բազմապատկում եւ բաժանում՝ ամբողջական թիւերով՝ բառային խնդիրներ լուծելու համար
- Սորվիլ բազմապատկիչներու եւ բազմապատիկներու մասին
 - 24-ի բազմապատկիչներ՝ 1, 2, 3, 4, 6, 8, 12
 - 4-ի բազմապատիկներ՝ 4, 8, 12, 16, 20
- Առարկաներով եւ թիւերով նմոյշներ պատրաստել եւ նկարագրել
- Հասկնալ եւ գործածել տեղի արժեքը՝ ընդհանրացնելու մինչև 1.000.000
 - Տարածուած ձեւ՝ $6783 = 6000 + 700 + 80 + 3$
- Հաշուել բազմաթուային թիւերով
- Խնդիրները լուծել՝ գործածելով բազմաթուային թիւերը երկիաթի թիւերով բազմապատկելու ձեւը
- Բազմաթուային թիւերը բաժնել մէկ միասոր բաժանարարով
- Բազմաթուային թիւերը կլորել որեւէ տեղ
- Կառուցել համարժեք կոտորակներու եւ համեմատական կոտորակներու հասկացութիւն




- Համեմատել երկու կոտորակները տարբեր համարիչներու եւ տարբեր յայտարարներու հետ՝ ընդհանուր յայտարարներ ստանալու համար

- Գումարել եւ հանել կոտորակները եւ խառն թիւերը՝ նման յայտարարներու հետ
- Հասկնալ կոտորակներու տասնորդական նշանագրութիւնը
- Համեմատել տասնորդականները
- Խնդիրները լուծել՝ գործածելով չափումի փոփոխումները
- Ուղղանկիւններու համար կիրարկել մակերեսի եւ շրջագիծի բանաձեւերը
- Դասաւորել եւ բացատրել տուեալները՝ գործածելով գծային հատուածը
- Հասկնալ եւ չափել անկիւնները
- Գծել եւ ճանչնալ գիծերը եւ անկիւնները
- Ըստ գիծերու եւ անկիւններու նկարագրել եւ դասակարգել կադապարները



Ուղիղ
անկիւններ



Զուգահեռ գիծեր

- Ճանչնալ համաչափութեան գիծերը

5-րդ Դասարան՝ Ակնարկ - Ուսողություն

Հինգերորդ դասարանի աշակերտները աւարտին կը հասցնեն բազմամիաւոր թիւերու գումարումի, հանումի, բազմապատկումի եւ բաժանումի սահունութիւնը: Անոնք կոտորակներու մասին ունեցած իրենց գիտելիքները կը կիրարկեն տարբեր յայտարարներով կոտորակներու գումարումի եւ հանումի, կոտորակի բազմապատկումի եւ բաժանումի հասկացութիւնը եւ տասնորդականներու գումարումն ու հանումը: Անոնք համակարգի հարթութեան մէջ կը վերլուծեն թուային նմոյշները եւ յարաբերութիւնները, ինչպէս նաեւ ցուցագիծի համեմատող զոյգերը: Աշակերտները կը հիմնուին երկրաչափութեան իրենց ունեցած գիտելիքներուն վրայ՝ ճանչնալով երկրաչափական կադապարներու յատկանիշները եւ հաշուելով չափումի անկիւնը եւ եռանկիւններու ու զուգահեռագիծ քառանկիւններու մակերեսը:

- Գրել եւ մեկնաբանել թուային արտայայտութիւններ՝ գործածելով չակերտներ, փակագիծեր, կամ մեծ փակագիծեր
 - «Գումարել 8-ը եւ 7-ը, յետոյ բազմապատկել 2-ով» հաւասար է՝ $2(8 + 7)$
- Ամբողջական թիւը արտայայտել $(2 - 50)$ որպէս իր հիմնական գործակիցներու արտադրեալը
- Տեսնելով փոփոխութիւնը՝ նկարագրել աւելի բարդ նմոյշներ

4 > + 6
10 > + 6
16 > + 6
22 > + 6
28 > + 6
34 > + 6
40 > + 6
46 > + 6
52 >

- Հասկնալ տեղի արժեքի համակարգը՝ հազարներէն մինչեւ միլիոնները
- Սահուն կերպով բազմապատկել բազմաթուային թիւերը՝ գործածելով չափանիշ հանրահաշիւը
- Բազմաթուային թիւերը բաժնել երկաթիւ բաժանարարներով
- Կարդալ, գրել եւ համեմատել տասնորդականները՝ հազարաւորներու հետ
- Որեւէ տեղ կլորել տասնորդականները
- Հաշուել բազմաթուային ամբողջական թիւերով եւ տասնորդականներէն մինչեւ հարիւրաւորներու թիւերով


$$\begin{array}{r} 423.12 \\ \times 8 \\ \hline \end{array}$$

$$\begin{array}{r} 8943.43 \\ + 17.50 \\ \hline \end{array}$$

$$5 \overline{) 25.75}$$

$$100 - 42.11 =$$

- Գումարել եւ հանել կոտորակները՝ տարբեր յայտարարներով
- Բազմապատկել կոտորակները եւ խառն թիւերը
- Բաժնել միաւորներու կոտորակները՝ ամբողջական թիւերով, իսկ ամբողջական թիւերը՝ միաւորներու կոտորակներով
- Փոխել չափումները եւ զանոնք գործածել խնդիրներու լուծման մէջ
 - 0.05 մ. = 5 սմ. կամ 2.5 ոտնաչափ = 30 մատնաչափ
- Դասաւորել եւ բացատրել տուեալները՝ գծային հատուած գործածելով
- Հասկնալ եւ գտնել ուղղանկիւն հատուածակողմերու ծաւալը
- Վերլուծել թիւերու նմոյշները
- Ցուցագիծի կէտերը համակարգի ցուցագիծին վրայ



- Ցոյց տալ ցուցագիծ x եւ y ուսողական առանցքներով՝ իրենց համակարգերով պիտակաւորուած շարք մը կէտերով
- Դասակարգումներու մէջ տեսակաւորել երկու ծաւալային կադապարներ՝ հիմնուած իրենց յատկութիւններուն վրայ

6-րդ Դասարան՝ Ակնարկ - Ուսողություն

Վեցերորդ դասարանի աշակերտները կ'օգտագործեն բազմապատկումի եւ բաժանումի վերաբերեալ իրենց ունեցած գիտելիքները՝ լուծելու համեմատութեան եւ քանակի վերաբերող խնդիրները: Անոնք աւարտին կը հասցնեն կոտորակներու բաժանումի վերաբերող գիտելիքները եւ կը սկսին բացասական ամբողջ թիւերու ուսումնասիրութիւնը: Անոնք կը հասկնան ուսողական արտայայտութիւններու մէջ փոփոխականներու գործածութիւնը, կը գրեն այնպիսի արտայայտութիւններ եւ հաւասարումներ, որոնք կը համապատասխանեն իրավիճակներու, ինչպէս նաեւ կը գործածեն արտայայտութիւններ եւ հաւասարումներ՝ խնդիրներ լուծելու համար: Աշակերտները կը սկսին հաւանականութեան եւ վիճակագրութեան ուսումնասիրութիւնը եւ կը գործածեն իրենց երկրաչափական հիմքային գիտելիքները, ներառելով տարածութիւն, մակերես եւ ծաւալ՝ խնդիրներ լուծելու համար:

- Հասկնալ համեմատութեան հասկացութիւնները եւ գործածել համեմատութեան հիմնաւորումը՝ խնդիրները լուծելու համար
- Հասկնալ միաւորի չափը
- Գտնել քանակի տոկոսը
- Կոտորակները կոտորակներով բաժնել
- Սահուն կերպով հաշուել բազմաթուային թիւերը եւ բազմաթուային տասնորդականները
- Գտնել ընդհանուր բազմապատկիչները եւ թիւերու բազմապատկիչները
- Գտնել երկու ամբողջական թիւերու ամենամեծ ընդհանուր բազմապատկիչը եւ ամենափոքր ընդհանուր բազմապատկիչը
- Գործածել դրական թիւերու ըմբռնումը՝ հասկնալու բանական թիւերը
- Հասկնալ դրական եւ բացասական ամբողջական թիւերը եւ կարենալ տեղաւորել բոլորակի քառորդ համակարգի հարթութեան մէջ
- Դասաւորել բանական թիւերը
- Հասկնալ բացարձակ արժէքը
- Գործածել թուաբանութիւն հասկացութիւնը՝ լուծելու մէկ փոփոխական հաւասարումը եւ անհաւասարութիւնները
- Գրել արտայայտութիւններ եւ հաւասարումներ՝ նկարագրելու իրական միջավայրի իրավիճակները՝ գործածելով փոփոխականներ
- Գրել եւ լուծել հաւասարումները՝ ամբողջ թիւերու ներկայացումով
- Գրել անհաւասարութիւն՝ նկարագրելու իրական միջավայր կամ ուսողական խնդիր

- Ներկայացնել եւ բացատրել կախեալ եւ անկախ փոփոխականներու միջեւ եղած յարաբերութիւնը

Օրինակ՝ մեքենան կընթանայ մէկ ժամուան մէջ 65 մղոն արագութեամբ: Նշել եւ ցուցագիծի վրայ ցոյց տալ հեռաւորութիւններու եւ ժամանակներու համեմատուող գոյգերը: Գրել հաւասարումը՝

$d = 65t$ -ն՝ ցոյց տալու, որ անցած հեռաւորութիւնը (d) կախուած է անփոփոխ արագութիւնը (65) բազմապատկած ընթացած ժամանակով:

$d = 65t$

Ժ=Ժամեր	հեռաւորութիւն
1	65
2	130
1/2	32.5



- Լուծել իրական միջավայրի խնդիրները՝ ներառնելով տարածութիւն, մակերես եւ ծաւալ
- Վիճակագրութեան վերաբերող հարցում հարցնել (Քանի՞ տարեկան են իմ դպրոցիս աշակերտները), հաւաքել եւ ճիշդ դասաւորել տուեալները գծային տարածքի, ցուցագիծի, հիւստիադագրի, կէտերով ներկայացուած տարածքի, տուփի տարածքի վրայ եւ այլն
- Նկարագրել եւ ամփոփել տուեալները՝ նշելով կեդրոնը, տարածութիւնը եւ ընդհանուր ձեւը
- Թուային գիծի վրայ ցուցադրել թուային տուեալները՝ ներառեալ կէտերով ներկայացուած տարածքները, հիւստիադագրները եւ տուփերուն մէջ ներկայացուած տարածքները:

7-րդ Դասարան՝ Ակնարկ - Ուսողություն

Եթե երոթ դասարանի աշակերտները կը խորացնեն համեմատական թիւերու յարաբերակցութեան մասին իրենց ունեցած գիտելիքները՝ լուծելու բարդ խնդիրներ: Անոնք կընդլայնեն բանական թիւերու մասին ունեցած իրենց գիտելիքները՝ ներառելով հաշիւը (գումարում, հանում, բազմապատկում եւ բաժանում): Անբանական թիւերը կը ներկայացուին եօնթերոթ դասարանի մէջ: Հանրահաշուական հիմքային գիտելիքները կը կրկնուին եւ կընդլայնուին: Աշակերտները կը շարունակեն ընդլայնել հաւանականութեան եւ վիճակագրութեան մասին իրենց ունեցած գիտելիքները, նկարագրելով բնակչութեան տեսակները՝ հիմնուելով օրինակներու վրայ, ինչպէս նաեւ կուսումնասիրեն հաւանականութեան օրինակները՝ զարգացնելու, գործածելու եւ գնահատելու հնարաւորութիւնը:

- Գործածել համեմատական թիւերու յարաբերութիւնը՝ բազմաքայլ գործողութեամբ եւ տոկոսային խնդիրները լուծելու
 - Եթէ անձը կը քալէ $\frac{1}{2}$ մղոն իւրաքանչիւր $\frac{1}{4}$ ժամուան մէջ, որքա՞ն է անոր արագութիւնը մէկ ժամուան մէջ:
- Հաշուել միաւորներու չափերը
- Գումարել, հանել, բազմապատկել եւ բաժնել բանական թիւերը
- Կոտորակները փոխել տասնորդականներու:
- Լուծել բազմաքայլ խնդիրներ՝ դրական եւ բացասական թիւերով.
 - Ժամը 18:00-ին ջերմաստիճանը -10 է: Եթէ ջերմաստիճանը 5 աստիճանով նուազի, որքա՞ն կըլլայ ժամը 20:00-ին:
- Գործածել գործողութիւններու յատկութիւնները՝ լուծելու հանրահաշուական հաւասարումները
- Գումարել, հանել, բազմապատկել եւ ընդլայնել գծային արտայայտութիւնները
- Գործածել փոփոխականներ՝ թիւերը իրական կեանքի խնդիրներուն մէջ ներկայացնելու համար:
- Կազմել պարզ հաւասարումներ եւ անհաւասարութիւններ՝ խնդիրները լուծելու համար
- Գծել, կազմել եւ նկարագրել երկրաչափական մարմիններ եւ նկարագրել անոնց միջեւ եղած յարաբերութիւնները
- Խնդիրներ լուծել՝ անկիւնի չափ, տարածութիւն, մակերես եւ ծաւալ, ներառելով (գլաններ, կոնէր եւ գունդեր)

- Լուծել իրական կեանքի խնդիրներ՝ ներառնելով կոներու, գլաններու եւ գունդերու ծաւալները
- Գիտնալ շրջագիծի տարածութեան եւ շրջանակի բանաձեւերը
- Գործածել փաստեր լրացուցիչ, զուգակցուող, ուղղահայեաց եւ կից անկիւններու մասին՝ բազմաքայլ խնդիրներ լուծելու համար:
- Գործածել պատահական նմոյշ՝ նկարագրելու եւ համեմատելու բնակչութեան թիւերը
- Գտնել, հաշուել եւ բացատրել հնարաւոր դէպքին հաւանականութիւնը
 - Օրինակ, եթէ աշակերտը ընտրուած է որեւէ դասարանէ, գտնել հաւանականութիւնը, որ Ճէյնը կ'ընտրուի եւ հաւանականութիւնը այն է, որ աղջիկ մը պէտք է ընտրուի:
 - Կամ, եթէ արինատուներու 40 առ հարիւրը ունի Ա խումբի արին, թէ ի՞նչ է հաւանականութիւնը, որ առնուագն 4 արինատուներէն հնարաւոր կըլլայ գտնել մէկը որ ունի Ա խումբի արին:

8-րդ Դասարան՝ Ակնարկ - Ուսողություն

Ութերորդ դասարանի աշակերտները կը խորացնեն բանական եւ անբանական թիւերու մասին իրենց ունեցած գիտելիքները: Հանրահաշիւօրէն աշակերտները կը հաշուեն արմատներով եւ աստիճաններով, լուծել գծային հաւասարումները եւ սահմանել, լուծել, համեմատել եւ գծագրել գործառնութիւնները: Երկրաչափութեան մէջ եօթներորդ դասարանի աշակերտները կը հասկնան ու կը կիրառեն Պիթագորէան Տեսութիւնը եւ խնդիրներ կը լուծեն՝ գործածելով գլաններու, կոններու եւ գունդերու ծաւալները:

- Հասկնալ բանական եւ անբանական թիւերը

Ճանչնալ իւրաքանչիւր թիւ որպէս բանական կամ անբանական

$\sqrt{18}$	անբանական, որովհետեւ 18-ը կատարեալ քառակուսի չէ
$\sqrt{64}$	անբանական, որովհետեւ 64-ը կատարեալ քառակուսի է
$-\sqrt{47}$	անբանական, որովհետեւ 47-ը կատարեալ քառակուսի չէ
135.6	անբանական, որովհետեւ անիկա ամբողջական տասնորդական է
0.2525...	անբանական, որովհետեւ անիկա կրկնուող տասնորդական է
0.120120012...	անբանական, որովհետեւ անիկա ո՛չ կ'աւարտի եւ ո՛չ ալ կը կրկնուի
Π	անբանական, որովհետեւ անիկա չի կրնար ներկայացուիլ որպէս a/b , ուր a -ն եւ b -ն ամբողջական թիւեր են

- Աշխատիլ արմատներու եւ ամբողջական թիւերու աստիճաններու հետ
 - Օրինակ, մօտաւորապէս հաշուել Միացեալ Նահանգներու բնակչութիւնը՝ 3×10^8 -ով եւ աշխարհի բնակչութիւնը՝ 7×10^9 -ով եւ որոշել, որ աշխարհի բնակչութիւնը աւելի քան 20 անգամ աւելի մեծ է:
- Հասկնալ համեմատական յարաբերութեան, գիծերու եւ գծային հաւասարումներու միջեւ կապը եւ կարենալ գտնոնք գծագրել
- Հասկնալ, որ համեմատական յարաբերութեան միաւոր չափը ցուցագիծի շեղութիւնն է
- Գործածել նմանատիպ եռանկիւններ՝ բացատրելու շեղութիւնը եւ հասկնալու $y = mx + b$
- Վերլուծել եւ լուծել գծային հաւասարումներ՝ մէկ փոփոխականով եւ միասնական գծային հաւասարումներու զոյգերով
- Սահմանել, լուծել եւ համեմատել գործառնութիւնները
- Հասկնալ, որ գործառնութիւնը կանոն է, իսկ դասաւորուած զոյգերը ներածում եւ արտածում են

- Կառուցել եւ գործածել գործառնությունները՝ ցոյց տալու յարաբերությունները
- Հասկնալ յարմարությունը եւ նմանությունը
- Հասկնալ, գործածել եւ կիրառել Պիթագորեան Տեսությունը
- Հետազօտել տուեալ խումբերու նմոյշները
- Կառուցել եւ բացատրել բաժանման տարածքները
- Խնդիրներ լուծել՝ ներառնելով գլաններու, կոներու եւ գունդերու ծաւալները
- Կառուցել եւ բացատրել բաժանման տարածքները


Մանկապարտեզ՝ Ակնարկ - Անգլերէն Լեզու

Մանկապարտեզի աշակերտները կ'աշխատին մղումով եւ աջակցութեամբ հաղորդակցելու գրականութեան կամ տեղեկութեան նիւթի հետ՝ հարցումներ հարցնելով եւ հարցումներուն պատասխանելով եւ ճանչնալով մանրամասնութիւններն ու հիմնական իրադարձութիւնները: Աշակերտները գիտեն ու կրնան անուանել բոլոր տառերը եւ կրնան տպատառով շատ տառեր գրել: Անոնք կրնան յաճախակի հանդիպող բառեր կարդալ կամ գծել, պատմել կամ գրել որեւէ գիրքի մասին:

Կարդալ

Մղումով եւ աջակցութեամբ.

- Ընթերցումի համար ընտրուած հատուածին մասին հարցումներ հարցնել եւ հարցումներուն պատասխանել
- Ճանչնալ պատմութեան կերպարները, գործողութիւններու վայրը եւ հիմնական իրադարձութիւնները
- Նորէն պատմել պատմութիւնները՝ ներառնելով մանրամասնութիւնները



Կարդալ. Հիմնական հմտութիւններ

- Հասկնալ տպագրութեան հիմնական առանձնայատկութիւնները
 - Ձախէն աջ
 - Վերէն վար
 - Էջ առ էջ
- Ճանչնալ եւ անուանել բոլոր մեծատառերը եւ փոքրատառերը
- Ճանչնալ, որ ըսուած բառերը կազմուած են վանկերէ եւ հնչիւններէ
- Ճանչնալ եւ արտաբերել յանգաւորուած բառեր
- Երկու կամ երեք հնչիւն միացնել՝ ճանաչելի բառ մը կազմելու համար
- Բառերը կարդալու ատեն հնչիւնաբանական մեթոտ գործածել
- Իւրաքանչիւր բաղաձայնի եւ ձայնաւորի համար յաճախութեամբ ըսել հնչիւնները
- Տեսողութեամբ կարդալ ընդհանուր, բարձր յաճախութեամբ գործածուող բառերը
 - The, of, to, you, is

Գրել


- Գծել, պատմել կամ գրել գիրքի մասին
- Գծել, պատմել կամ գրել իրադարձութիւններու մասին այն յաջորդականութեամբ, որով պատահած են

Խօսիլ եւ լսել

- Մասնակցիլ քննարկումներուն
 - Լսել ուրիշները
 - Խօսելու ատեն կարգով խօսիլ
- Հետեւիլ բանաւոր ուղղութիւններուն
- Հարցումներ հարցնել եւ հարցումներուն պատասխանել
- Նկարագրել մարդիկը, վայրերը, առարկաները եւ իրադարձութիւնները՝ մանրամասնութիւններ տրամադրելով

Լեզու

- Տպել շատ մեծատառեր եւ փոքրատառեր
- Գործածել մեծատառերով գրելը, կէտադրութիւն եւ ուղղագրութիւն
- Ճանչնալ ծանօթ բառերու նոր իմաստները
 - Գիտնալ, որ բաղը (*duck*) թռչուն է եւ սորվիլ սուգուիլ (*to duck*) բայի ձեւը
- Ընդհանուր առարկաները կարգերու բաժնել
 - Կաղապարներ, ուտելիք



1-ին Դասարան՝ Ակնարկ - Անգլերէն Լեզու

Առաջին դասարանի աշակերտները անկախաբար կը հաղորդակցին գրականութեան կամ տեղեկութեան նիւթի հետ՝ հարցումներ հարցնելով եւ հարցումներուն պատասխանելով, ինչպէս նաեւ ճանչնալով մանրամասնութիւններն ու հիմնական իրադարձութիւնները: Անոնք կրնան յստակ եւ արտայայտիչ կերպով բարձրաձայն կարդալ: Առաջին դասարանի աշակերտները կրնան տպատառերով գրել բոլոր տառերը եւ կրնան գրել իրադարձութիւններու, թեմաներու եւ կարծիքներու մասին:

Կարդալ

- Ընթերցումի համար ընտրուած հատուածին մասին հարցումներ հարցնել եւ հարցումներուն պատասխանել
- Նորէն պատմել պատմութիւնները՝ ներառնելով մանրամասնութիւնները
- Բացատրել պատմութիւն պատմող գիրքերուն եւ տեղեկութիւններ հաղորդող գիրքերուն տարբերութիւնը
- Մղումով եւ աջակցութեամբ կարդալ առաջին դասարանի համար նախատեսուած տեղեկութեան նիւթերը

Կարդալ. Հիմնական հմտութիւններ

- Հասկնալ տպագրութեան հիմնական առանձնայատկութիւնները
- Ճանչնալ նախադասութեան առանձնայատկութիւնները
 - Մեծատառերով գրելը
 - Կէտադրութեան վերջաւորութիւնը
- Հասկնալ ըսուած բառերը, վանկերը եւ հնչիւնները
- Հասկնալ հնչիւնաբանական մեթոտը եւ բառի վերլուծութիւնը
 - Գիտնալ, որ իւրաքանչիւր վանկ պէտք է ձայնաւոր հնչիւն ունենայ
- Կարդալ սովորաբար արտասանուող միավանկ եւ երկվանկ բառեր
- Բարձրաձայն կարդալ՝ յստակ եւ արտայայտիչ կերպով

Գրել

- Գրել կարծիքի հատուածներ, որոնք կը ներառնեն կարծիք եւ այդ կարծիքը ունենալու պատճառը
- Գրել տեղեկատուական հատուածներ, որոնք նիւթեր կ'անուանեն, փաստեր եւ ամփոփում կը տրամադրեն
- Գրել պատմութիւններ՝ երկու կամ աւելի իրադարձութիւններու մասին՝ մանրամասնութիւններ ներառնելով


Խօսիլ եւ լսել

- Հետեւիլ քննարկումներու կանոններուն՝ կառուցելով այն բոլորի վրայ, թէ ինչ կ'ըսեն միւսները, ինչպէս նաեւ հարցումներ հարցնելով
- Հետեւիլ պարզ, երկքայլ ուղղութիւններու
- Խօսիլ ամբողջական նախադասութիւններով

Լեզու

- Գործածել ճիշդ քերականութիւն
- Տպել բոլոր մեծատառերը եւ փոքրատառերը
- Գործածել մեծատառերով գրելու ճիշդ ձեւ, կէտադրութիւն եւ ուղղագրութիւն
- Որոշել անձանօթ բառերու իմաստը՝ նայելով բառի մասերուն եւ նախադասութեան այլ բառերուն

- Տեսակաւորել բառերը դասակարգելու եւ որոշել բառերը հիմնական յատկանիշներով
 - Վագրը գիծերով մեծ կատու է



2-րդ Դասարան՝ Ակնարկ - Անգլերէն Լեզու

Երկրորդ դասարանի աշակերտները ճիշդ կը կարդան եւ կը հասկնան գրականութիւնն ու տեղեկատուական նիւթերը: Անոնք կը գործածեն ճիշդ քերականութիւնը, մեծատառերով գրելը, կէտադրութիւնը եւ ուղղագրութիւնը: Անոնք կրնան ծրագրել եւ որեւէ պատմութիւն կամ փորձ պաշտօնապէս ներկայացնել:

Կարդալ

- Կրկնել ժողովրդական հեքիաթները՝ հիմնական դաս ներառնելով
- Բացատրել, թէ ինչպէս հեղինակը կը գործածէ պատճառները՝ հիմնաւորելու նիւթի որոշակի կէտերը
- Ճանչնալ հիմնական նիւթը եւ կեդրոնը
- Կարդալ եւ հասկնալ գրականութիւնն ու տեղեկատուական նիւթերը
- Կարդալ. Հիմնական հմտութիւններ
- Ծանօթանալ եւ գործածել հնչյունաբանական մեթոտը եւ բառի վերլուծութեան հմտութիւնները
 - Կարդալ բառերը՝ յաճախակի հանդիպող նախածանցներով եւ վերջածանցներով (օրիանկ, re_, սո_, _less)
- Տարբերել երկար եւ կարճ ձայնաւորները
- Յաճախ երկվանկ արտասանուող բառերը կարդալ երկար ձայնաւորներու հետ
- Կարդալ ճիշդ եւ հասկնալով

Գրել

- Գրել կարծիքներ, որոնք կը կապեն կարծիքն ու պատճառները՝ գործածելով կապող բառեր
 - Որովհետեւ, եւ, նաեւ (because, and, also)
- Գրել տեղեկատուական հատուածներ, որոնք ունին նիւթ, փաստեր, սահմանումներ եւ եզրակացութիւն
- Գրել պատմութեան հատուածներ, որոնք կը ներառեն մանրամասնութիւններ՝ գործողութիւններ, միտքեր եւ զգացումներ նկարագրելու համար
- Գրաւոր նիւթ պատրաստել, որ մշակուած, կեդրոնացած եւ կազմակերպուած է
- Սովորաբար գրել երկարաձգուած ժամանակամիջոցներու եւ աւելի կարճ ժամանակամիջոցներու


Խօսիլ եւ լսել

- Մասնակցիլ հասակակիցներու եւ չափահասներու հետ խօսակցութիւններուն՝ փոքր կամ մեծ խումբերով
- Բարձրաձայն կարդացուած որեւէ նիւթ վերլիշել եւ նկարագրել հիմնական գաղափարներ եւ մանրամասնութիւններ
- Տալ եւ հետեւիլ երեք եւ չորս քայլէ բաղկացած բանաւոր հրահանգներու
- Պատմութիւն կամ դէպք մը ծրագրել եւ ներկայացնել

Լեզու

- Քերականութիւնը ճիշդ գործածել
- Ստեղծել պարզ փաստաթուղթեր՝ ընթեռնելի տառերով գրուած
- Գործածել մեծատառերով գրելու ճիշդ ձեւ, կէտադրութիւն եւ ուղղագրութիւն
- Գործածել շարք մը մեթոտներ՝ բառին իմաստը որոշելու համար

- Գործածել առանձին բառեր՝ որոշելու բարդ բառերուն իմաստը, որոնք նոր բառ կազմելու համար միացած երկու բառեր են



3-րդ Դասարան՝ Ակնարկ - Անգլերէն Լեզու

Երրորդ դասարանի աշակերտները կը հաղորդակցին գրականութեան եւ տեղեկատուական նիւթերու հետ՝ համեմատելով եւ հակադրելով պատմութիւնները, տեսակէտ քննարկելով եւ զայն համեմատելով հեղինակի կարծիքին հետ եւ դէպքերու, գաղափարներու կամ հասկացութիւններու շարք մը նկարագրելով: Կարդալու հետ միասին, երրորդ դասարանի գրաւոր խօսքը աւելի զարգացած է: Աշակերտները կը ստեղծեն զարգացած, կեդրոնացած եւ խմբագրուած աշխատանք: Գրաւոր աշխատանքի տեղեկատուական հատուածներուն մէջ անոնք կը ներառեն աղիւսակներ, ցուցագիծեր կամ փաստեր կը տրամադրեն:

Կարդալ

- Նկարագրել, թէ ինչպէս կերպարներու գործողութիւնները կը նպաստեն դէպքերու զարգացման
- Համեմատել եւ հակադրել պատմութիւններ
- Անկախաբար կարդալ եւ հասկնալ դասարանի մակարդակին համապատասխան գրականութիւն
- Նկարագրել դէպքերու, գաղափարներու կամ հասկացութիւններու շարք մը
- Տեսակէտ նկարագրել եւ զայն համեմատել հեղինակի տեսակէտին հետ

Կարդալ. Հիմնական հմտութիւններ

- Դասարանի մակարդակին համապատասխան հնչիւնաբանական մեթոտ եւ բառի վերլուծութեան հմտութիւններ գործածել
 - Կարդալ բազմավանկ բառեր, օրինակ՝ mosquito, puppeteer
- Գիտնալ շատ յաճախ գործածուող նախածանցներու եւ վերջածանցներու իմաստը
- Կարդալ ճիշդ եւ հասկնալով

Գրել

- Գրել կարծիքին վերաբերող հատուածներ, որոնք աղիւսակ կամ ցուցագիծ կը ներառեն եւ նշել պատճառները, որոնք կը հիմնաւորեն այդ կարծիքը
- Գրել տեղեկատուական հատուածներ, որոնք կ'անուանեն նիւթը, կը հիմնաւորեն փաստերը եւ կը գործածեն կապող բառեր եւ արտայայտութիւններ
- Գրել պատմողական հատուածներ, որոնք կը ներկայացնեն պատմողը եւ կերպարները, եւ գրել այն մասին, թէ ինչ կըսեն, կը մտածեն եւ կը զգան կերպարները
- Գրաւոր աշխատանք պատրաստել, որ մշակուած, կեդրոնացած, կազմակերպուած եւ խմբագրուած է

Խօսիլ եւ լսել

- Հետեւիլ քննարկումներու կանոններուն՝ կառուցելով ուրիշներու ըսածին վրայ
- Բարձրաձայն կարդացուած որեւէ նիւթ գաղափարներ եւ մանրամասնութիւններ վերլիշել
- Ծրագրել եւ ներկայացնել տեղեկատուական ներկայացում
- Կարդալ հասկնալի եւ ամբողջական նախադասութիւններով

Լեզու

- Քերականութիւնը ճիշդ գործածել
- Ընթեռնելի գրել սահուն կամ միացուած շեղագիրներով, գործածել լուսանցքներ եւ տարածութիւն թողուլ
- Ազդեցութեան համար բառեր եւ արտայայտութիւններ ընտրել
- Գործածել նախադասութիւններու շարք մը տեսակներ
- Համապատասխան բառերը մեծատառերով գրել

- Վերջածանցները ճիշդ ձևով աւելցնել հիմնական բառերուն
 - Sitting, smiled, cries
- Ճանչնալ չափանիշ անգլերէնի բանաւոր եւ գրաւոր խօսքի միջեւ եղած տարբերութիւնները

4-րդ Դասարան՝ Ակնարկ - Անգլերէն Լեզու

Չորրորդ դասարանի աշակերտները կը կարդան աւելի երկար բառեր եւ կը գործածեն արմատներ, նախածանցներ եւ վերջածանցներ՝ որոշելու անծանօթ բառերու իմաստը: Անոնք նիւթին մէջ մանրամասնութիւններ եւ օրինակներ կը գործածեն՝ որոշելու հիմնական գաղափարը եւ կը նկարագրեն կերպար մը, գործողութիւններու վայր կամ դէպք մը: Աշակերտները գրաւոր աշխատանք կը պատրաստեն, որ մշակուած, կեդրոնացած, կազմակերպուած եւ խմբագրուած է: Անոնք պարբերութիւններու եւ բաժիններու մէջ կը խմբաւորեն կապուած գաղափարները եւ եզրակացութիւն կը ներկայացնեն: Չորրորդ դասարանի աշակերտները գիտեն, թե երբ յարմար է գործածել պաշտօնական, իսկ երբ՝ ոչ պաշտօնական անգլերէն:

Կարդալ

- Գործածել բնագրի մանրամասնութիւնները եւ օրինակները՝ որոշելու հիմնական գաղափարը եւ նկարագրել կերպար, գործողութիւններու վայր կամ դէպք մը
- Գործածել առաջին դէմքի (օրինակ՝ ես ըսի (I said)) եւ երրորդ դէմքի (օրինակ՝ ան ըսաւ (She said)) պատմողական ոճերը
- Կարդալ եւ հասկնալ գրականութիւնն ու տեղեկատուական նիւթերը

Կարդալ. Հիմնական հմտութիւններ

- Դասարանի մակարդակին համապատասխան հնչիւնաբանական մեթոտ եւ բառի վերլուծութեան հմտութիւններ գործածել
 - Արմատներ, նախածանցներ եւ վերջածանցներ
- Կարդալ բազմավանկ բառեր
- Ճիշդ եւ հասկնալով կարդալ

Գրել

- Գրել կարծիքին վերաբերող հատուածներ, որոնք կարծիքի հետ կապուած եզրակացութիւն ունին
- Գրել տեղեկատուական հատուածներ, որոնք կը խմբաւորեն կապուած գաղափարները պարբերութիւններու եւ բաժիններու մէջ եւ եզրակացութիւն կը ներկայացնեն
- Գրել պատմութիւններ, որոնք կը ծանօթացնեն պատմողին եւ կերպարներուն. գրել այն մասին, թէ ինչ կ'ըսեն, կը զգան եւ կը մտածեն կերպարները, գործածել զգայական մանրամասնութիւններ
 - Տեսք, ձայն, բուրմունք
- Գրաւոր աշխատանք պատրաստել, որ մշակուած, կեդրոնացած, կազմակերպուած եւ խմբագրուած է
- Կարճ հետազօտական հատուած գրել

Խօսիլ եւ լսել

- Մասնակցիլ քննարկումներուն՝ կատարելով տրուած դերերը
- Վերապատմել բարձրաձայն կարդացուած տեղեկատուական հատուածը
- Ծրագրել եւ ներկայացնել ներկայացումը՝ անձնական փորձի վրայ հիմնուելով
- Յստակ խօսիլ՝ ամբողջական նախադասութիւններով եւ համապատասխան ընթացքով

Լեզու

- Քերականութիւնը ճիշդ գործածել
- Գործածել ամբողջական նախադասութիւններ

- Ճիշդ գործածել յաճախակի շփոթող բառերը
 - To, two, too
 - There, their, they're
- Գործածել մեծատառերով գրելու ճիշդ ձև, կետադրություն եւ ուղղագրություն
- Դասարանի մակարդակին համապատասխան բառերը ճիշդ գրել
- Գիտնալ, թե երբ յարմար է գործածել պաշտօնական, իսկ երբ՝ ոչ պաշտօնական անգլերեն:

5-րդ Դասարան՝ Ակնարկ - Անգլերէն Լեզու

Հինգերորդ դասարանի աշակերտները կը հիմնուին իրենց ունակութիւններուն վրայ՝ կարդալու, աւելի երկար բառեր, գործածելով արմատներ, նախածանցներ եւ վերջածանցներ՝ որոշելու անծանօթ բառերու իմաստը: Աշակերտները կը բացատրեն, թէ ինչպէս հեղինակը կը հիմնաւորէ նիւթին մէջ եղած ըսելիքները: Անոնք ճիշդ մեջբերումներ կը գործածեն, երբ կը յիշատակեն նիւթը: Աշակերտները նկատի կ'ունենան լսարանը եւ գրելու ընթացքին դէպքերու յստակ յաջորդականութիւն կը նշագրեն: Աշակերտները կը լսեն խօսողին կամ լրատուամիջոցին եւ պատճառներ ու ապացոյցներ կը գտնեն՝ հիմնաւորելու որոշակի ըսելիքներ: Անոնք կը ճանչնան եւ կը քննարկեն շփոթեցնող գաղափարները:

Կարդալ

- Ճիշդ կը մեջբերեն, երբ կը յիշատակեն նիւթը
- Կորոշեն հիմնական գաղափարները եւ կամփոփեն նիւթը
- Կը համեմատեն եւ կը հակադրեն նիւթերը
- Կը բացատրեն, թէ ինչպէս հեղինակը կը գործածէ պատճառը կամ ապացոյցը՝ հիմնաւորելու նիւթին ըսելիքները

Կարդալ. Հիմնական հմտութիւններ

- Դասարանի մակարդակին համապատասխան հնչիւնաբանական մեթոտ եւ բառի վերլուծութեան հմտութիւններ գործածել
 - Արմատներ, նախածանցներ, վերջածանցներ
- Ճիշդ եւ սահուն կարդալ

Գրել

- Գրել կարծիքի վերաբերող հատուածներ, որոնք կը հիմնաւորեն տեսակէտը՝ պատճառներով եւ տեղեկութիւններով
- Տեղեկատուական նիւթեր գրել, որոնք գաղափարներ եւ տեղեկութիւններ կը կիսեն
- Պատմութիւններ գրել, որոնք կը գործածեն կապակից նկարագրական մանրամասնութիւններ եւ իրադարձութիւններու յստակ յաջորդականութիւն մը
- Պարզ եւ նպատակային գրել. նկատի ունենալ լսարանը
- Թեքնիքը գործածել՝ գրուածը տպելու. երկու էջը մէկ հատի մէջ տպել

Խօսիլ եւ լսել

- Ամփոփել ներկայացուած տեղեկատուութիւնը
- Ճանչնալ խօսողի կամ լրատուամիջոցի պատճառներն ու ապացոյցները՝ հիմնաւորելու որոշակի ըսելիքներ
- Ճանչնալ եւ քննարկել շփոթեցնող գաղափարներ
- Ծրագրել եւ ելոյթ ներկայացնել
- Գոց սորված ոտանաւոր կամ հատուած ներկայացնել

Լեզու

- Քերականութիւնը ճիշդ գործածել
- Բայի ժամանակները ճիշդ գործածել
 - Երէկ եւ քալեցի (Yesterday I walked)
 - Այսօր կը քալեմ (Today I walk)
 - Վաղը պիտի քալեմ (Tomorrow I will walk)
- Գործածել մեծատառերով գրելու ճիշդ ձեւ, կէտադրութիւն եւ ուղղագրութիւն
- Կէտադրութիւն գործածել՝ շարքի/ցանկի կէտը բաժնելու համար

- Վերնագիրի մէջ ընդգծելը, չակերտները կամ շեղագրելը գործածել
- Տարբերել նախադասութեան երկարութիւնն ու ոճը
- Համեմատել եւ հակադրել գրականութեան մէջ գործածուած ոճերը
- Գործածել այլատեսակ մեթոտներ՝ որոշելու անձանօթ բառին իմաստը

6-րդ Դասարան՝ Ակնարկ - Անգլերէն Լեզու

Վեցերորդ դասարանի աշակերտները կարդացած նիւթին ամփոփումը կը ներկայացնեն առանց անձնական կարծիքներու կամ դատողութիւններու: Անոնք այլատեսակ հատուածներ կը գրեն՝ ներառեալ հետազօտական ծրագիրներ, եւ թեքնոլոժի կը գործածեն՝ աշխատանքը տպելու համար: Աշակերտները տրամաբանական դասաւորութեամբ կը ներկայացնեն նկարագրութիւնները, փաստերը եւ մանրամասնութիւնները:

Կարդալ

- Որոշել հիմնական գաղափարը եւ հիմնաւորող մանրամասնութիւնները
- Ամփոփում ներկայացնել՝ առանց անձնական կարծիքներու կամ դատողութիւններու
- Որոշել, թէ ինչպէս կը նպաստէ նիւթին կառուցուածքը հիմնական գաղափարին
- Որոշել հեղինակին տեսակէտը
- Բացատրել, թէ ինչպէս կը զարգանայ պատմողին կամ խօսողին տեսակէտը
- Տարբերել նիւթի մէջ առկայ փաստերը, կարծիքները, հիմնաւորուած դատողութիւնները եւ ենթադրութիւնները
- Կարդալ եւ հասկնալ դասարանի մակարդակին համապատասխան գրական եւ փաստագրական նիւթեր

Գրել

- Փաստարկներ գրել պնդումները հիմնաւորելու՝ յստակ պատճառներով եւ պատշաճ ապացոյցներով
- Գրել տեղեկատուական նիւթեր, որոնք կը քննեն թեման եւ գաղափարներ կը հաղորդեն
- Գրել պատմութիւններ, որոնք կը ներառեն պատշաճ նկարագրական մանրամասնութիւններ եւ դէպքերու լաւ կառուցուածքի դասաւորութիւն
- Իրականացնել փոքր հետազօտական ծրագիրներ եւ կրկին կեդրոնանալ հետազօտութեան վրայ, եթէ անհրաժեշտ է
- Գործածել թեքնոլոժիան՝ պատրաստելու եւ տպելու գրուած նիւթերը. երեք էջը մէկ էջի մէջ մեքենագրել

Խօսիլ եւ լսել

- Մասնակցիլ քննարկումներուն՝ թէ՛ դէմ առ դէմ, թէ՛ խմբային
- Գտնել պնդումներ, որոնք հիմնաւորուած են խօսողի փաստարկներուն մէջ բերուած պատճառներով եւ ապացոյցներով
- Ծրագրել եւ հրամցնել տեղեկատուական ներկայացում
- Փաստերը եւ մանրամասնութիւնները ներկայացնելու ատեն տրամաբանական հերթականութեամբ դասաւորել

Լեզու

- Լեզուն եւ քերականութիւնը ճիշդ գործածել
- Գործածել մեծատառերով գրելու ճիշդ ձեւ, կէտադրութիւն եւ ուղղագրութիւն
- Գործածել այլատեսակ մեթոտներ՝ որոշելու անձանօթ բառերու իմաստը
- Տարբերակել նման իմաստ ունեցող բառերը
 - Ազահ (Stingy), խնայողական (economical), խնայող (thrifty)

7-րդ Դասարան՝ Ակնարկ - Անգլերէն Լեզու

Եօթներորդ դասարանի աշակերտները կը կարդան եւ կը հասկնան դասարանի մակարդակին համապատասխան փաստագրական գրականութիւն: Անոնք կը համեմատեն եւ կը հակադրեն գեղարուեստական եւ պատմական հիմքերը: Աշակերտները կը գրեն այլատեսակ գործեր՝ ստեղծելով դասաւորուած փաստարկներ՝ պնդումները հիմնաւորելու համար: Հետազօտական ծրագիրներ գրելու ատեն, աշակերտները լրացուցիչ հարցումներ կը հաւաքագրեն յետագայ հետազօտութիւններու համար: Երբ անոնք կը ներկայացնեն՝ կը գործածեն իրարու աչքերուն նայիլը, համապատասխան ծաւալ եւ յստակ արտասանութիւն:

Կարդալ

- Բացատրել, թէ ինչ կըսուի գրութեան մէջ եւ եզրակացութիւններ ընել
- Որոշել գրութեան հիմնական գաղափարները եւ թէ ինչպէս անոնք կը զարգանան
- Վերլուծել, թէ ինչպէս պատմութեան բաղադրիչները կամ գործողութիւններու վայրը կը ձեւաւորեն սիւժէն
- Վերլուծել, թէ ինչպէս հեղինակը կը զարգացնէ եւ կը հակադրէ իր անձնական տեսակէտը կերպարներու կամ պատմողի հետ
- Վերլուծել գրութեան կառուցուածքը
 - Գծագրութիւններ, վերնագիրներ եւ մակագրութիւններ
- Համեմատել եւ հակադրել գեղարուեստական եւ պատմական հիմքերը
- Գնահատել թէ որքանո՞վ գրութեան մէջ առկայ դատողութիւնն ու ապացոյցները կը հիմնաւորեն հեղինակին պնդումները
- Կարդալ եւ հասկնալ դասարանի մակարդակին համապատասխան գրական եւ փաստագրական գրութիւններ

Գրել

- Փաստարկներ գրել՝ հիմնաւորելու յստակ պատճառներու եւ համապատասխան ապացոյցներու պնդումները
- Տեղեկատուական գրութիւն գրել, որոնք կը քննեն թեման եւ գաղափարներ կը յայտնեն
- Պատմութիւններ գրել, որոնք կը ներառեն համապատասխան նկարագրական մանրամասնութիւններ եւ դէպքերու լաւ կառուցուած յաջորդականութիւն
- Հետազօտական ծրագիրներ իրականացնել եւ ցոյց տալ հետազօտութեան ենթակայ նիւթի ըմբռնումը
- Գործածել թեքնոլոգիան՝ պատրաստելու եւ տպելու գրուած նիւթերը. տեղեկատուութեան աղբիւրներուն վերաբերող վկայակոչումներ եւ յղումներ ներառնել

Խօսիլ եւ լսել

- Մասնակցիլ քննարկումներուն՝ թէ՛ դէմ առ դէմ, թէ՛ խմբային
- Գնահատել խօսողի փաստարկներուն մէջ առկայ հիմնաւորումը եւ ապացոյցներու համապատասխանութիւնը
- Ծրագրել եւ փաստարկ ներկայացնել
- Ներկայացնելու ատեն՝ օգտագործել իրարու աչքերուն նայիլը, համապատասխան ծաւալ եւ յստակ արտասանութիւն

Լեզու

- Քերականութիւնը եւ լեզուն ճիշդ գործածել
- Գործածել մեծատառերով գրելու ճիշդ ձեւ, կէտադրութիւն եւ ուղղագրութիւն

- Գործածել այլատեսակ մեթոտներ՝ որոշելու անձանօթ բառերու իմաստը
- Գործածել բառերու միջեւ եղած յարաբերութիւնները՝ աւելի լաւ հասկնալու բառերը
 - Հոմանիշ բառ, որ նոյն իմաստը ունի
 - Հականիշ բառ, որ հակառակ իմաստը ունի

8-րդ Դասարան՝ Ակնարկ - Անգլերէն Լեզու

Ութերորդ դասարանի աշակերտները շատ կը հաղորդակցին գրականութեան եւ տեղեկատուական նիւթերու հետ: Անոնք կը գործածեն ընտրուած հատուածներու փաստերը՝ վերլուծելու կերպարներու տեսակէտները եւ թէ ինչպէս հեղինակը կը գործածէ երկխօսութիւնը: Աշակերտները կը մէջբերեն բնագրային փաստեր՝ հիմնաւորելու բնագրի իրենց վերլուծութիւնները եւ հասկնալու, թէ ինչպէս կառուցուածքը կը նպաստէ իւրաքանչիւր բնագրի իմաստին եւ ոճին: Գրաւոր խօսքին մէջ աշակերտները ցոյց կու տան դէպքերու եւ իրադարձութիւններու միջեւ եղած յարաբերութիւնը:

Կարդալ

- Գործածել փաստեր, երբ ընթերցումէն հետեւութիւններ կը կատարուին
- Որոշել նիւթ մը եւ անոր կապը իր կերպարներուն, գործողութիւններու վայրին եւ դիպաշարին (plot) հետ
- Վերլուծել, թէ ինչպէս երկխօսութիւնը կ'ազդէ բնագրի ելքին վրայ
- Հասկնալ, թէ ինչպէս կառուցուածքը կը նպաստէ իւրաքանչիւր բնագրի իմաստին եւ ոճին
- Վերլուծել, թէ ինչպէս կերպարներու եւ ընթերցողի տեսակէտները ազդեցութիւններ կը ստեղծեն, գործիւնակ՝ անհանգստութիւնը եւ հումորը
- Որոշել հեղինակի՝ բախուող տեսակէտներուն տրուող պատասխանը
- Գնահատել հեղինակի նախադրեալները կամ վարկածները՝ եզրակացութիւնները լրացուցիչ հիմնաւորելով կամ մարտահրաւէր նետելով այլ տեղեկատուական աղբիւրներուն
- Կարդալ եւ հասկնալ դասարանի մակարդակին համապատասխան գրական եւ փաստագրական գրուած նիւթեր

Գրել

- Փաստարկներ գրել՝ հիմնաւորելու յստակ պատճառներու եւ համապատասխան ապացոյցներու պնդումները
- Տեղեկատուական նիւթեր գրել, որոնք կը քննեն թեման եւ գաղափարներ կը յայտնեն
- Պատմութիւններ գրել, որոնք ցոյց կու տան դէպքերու եւ իրադարձութիւններու միջեւ եղած յարաբերութիւնը
- Հետազօտական ծրագիրներ իրականացնել եւ ցոյց տալ հետազօտութեան ենթակայ նիւթի ըմբռնումը
- Գործածել թեքնոլոժիան՝ պատրաստելու եւ տպելու գրուած նիւթերը եւ ներկայացնել տեղեկատուութեան եւ գաղափարներու միջեւ եղած յարաբերութիւնը

Խօսիլ եւ լսել

- Մասնակցիլ քննարկումներուն՝ թէ՛ դէմ առ դէմ, թէ՛ խմբային
- Հասկնալ, թէ երբ անհամապատասխան փաստեր կը գործածուին խօսողի պնդումներուն մէջ
- Ծրագրել եւ ներկայացնել պատմութիւն
- Ներկայացնելու ատեն՝ գործածել իրարու աչքերուն նայիլը, համապատասխան ծաւալը եւ յստակ արտասանութիւն

Լեզու

- Քերականութիւնը եւ լեզուն ճիշդ գործածել

- Գործածել մեծատառերով գրելու ճիշդ ձև, կետադրություն եւ ուղղագրություն
- Գործածել այլատեսակ մեթոտներ՝ որոշելու անձանօթ բառերու իմաստը
- Մեկնաբանել խօսքի պատկերաւոր արտայայտութիւնը
- Բանաւոր հեզնանք
- Բառախաղեր

[NOTE TO LOCAL EDUCATIONAL AGENCIES (LEAS): As a form of assistance to LEAs, the California Department of Education (CDE) offers this translation free of charge. Because there can be variations in translation, the CDE recommends that LEAs confer with local translators to determine any need for additions or modifications, including the addition of local contact information or local data, or modifications in language to suit the needs of specific language groups in the local community. If you have comments or questions regarding the translation, please e-mail the Clearinghouse for Multilingual Documents (CMD) at cmd@cde.ca.gov.]